ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/160

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.06.2021թ. թիվ 26/26-1/9734-2021 գրությամբ «Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 08.06.2021թ. թիվ 01/61-13296 գրության հիման վրա, 16.06.2021թ. թիվ 26/26-1/9734-2021 գրությամբ նախաձեռնել է «Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/160 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2021թ. թիվ 01/61-13296 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 23.02.2021 թվականին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» ծածկագրով գնման ընթացակարգ:

Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված կարգով 19.05.2021 թվականին մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» ծածկագրով պայմանագիրը և վերը նշված ապահովումները: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով, առաջարկում եմ մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/160 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/160 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ի գնի առաջարկի և ծավալաթերթ նախահաշիվների գումարները չեն համապատասխանում իրար:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերությունն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

6. Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2021թ. թիվ 01/61-13296 գրությամբ մասնավորապես հայտնել է, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» ծածկագրով պայմանագիրը և ապահովումները, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

7. Ընկերության կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ներկայացված գնային առաջարկը պատշաճ ստորագրված չէ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.06.2021թ. թիվ 26/26-1/9734-

2021 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 08.06.2021թ. թիվ 01/61-13296 գրությունը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Շին Կոնցեռն Գրուպ» ՍՊԸ-ի գնի առաջարկի և ծավալաթերթ նախահաշիվների գումարները չեն համապատասխանում իրար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերությունն Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո Ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2021թ. թիվ 01/61-13296 գրությամբ մասնավորապես հայտնել է, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» ծածկագրով պայմանագիրը և ապահովումները, ուստի համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործով առկա փաստաթղթերը, մասնավորապես Ընկերության կողմից ներկայացված հայտը, գնահատող հանձնաժողովի գործողությունները, հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:***

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:***

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ***:

Նույն կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն

էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ***Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:***

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այս մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 07.07.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/11008-2021 գրությամբ դիմել է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին և խնդրել տրամադրել տեղեկատվություն՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Շին կոնցերն գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկ փաստաթղթի վավեր էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած լինելու վերաբերյալ՝ կից ներկայացնելով «Շին կոնցերն գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը:

Ի պատասխան նշված գրության՝ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն 09.07.2021թ. թիվ 1984 գրությամբ հայտնել է, որ «Շին կոնցերն գրուպ» ՍՊԸ-ի «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/55» մրցույթին ներկայացված գնային առաջարկը պատշաճ ստորագրված չէ:

Այսինքն՝ Ընկերության կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին ի սկզբանե չի համապատասխանել, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն անտեսելով, որ գնային առաջարկը ներկայացված է ոչ պատշաճ, «Շին կոնցերն գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից, ներկայացրել է պայմանագիր կնքելու առաջարկ, որից հետո նոր միայն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2021թ. թիվ 01/61-13296 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և առաջարկել վերջինիս նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Այսպիսով՝ հաշվի առնելով Ընկերության գնային առաջարկում առկա անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, ինչպես նաև այն փաստական հանգամանքը, որ տվյալ դեպքում գնային առաջարկում առկա անհամապատասխանությունն արձանագրված լինելու պայմաններում հնարավոր է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայեր, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության

խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.06.2021թ. թիվ 26/26-1/9734-2021 գրությամբ «Շին կոնցերն գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**